2. Սբ. Խաչս (նոյն ձեւով) բարէխաւս տր. Ղազարին / եւ Մարթայ։

Է) Մեծ տաճարի հարաւային դրան առաջ եղել է գերեզմանատուն, տափակ քարերով. նոցանից թուականով երկուսը յիշեցինք, հետևեալ գերեզմանաքարերն առանց թուականի են.

1. Այս է հանկ/իստ Վարդ/ան քահան/այի.

2. Այս է հանգիստ Վասակա որդո Ցալէ? / Խաչենեցո. յիշեսջիք աղաչեմ.

3. ԱՀ ողորմեա սբ. վարդապետիս Սիմէ/ոնի եւ Էսաոյ եղբ . . . հանգու/ցել են . .

4. (Այ)ս է հանգիս(տ) Ելբէքին որդո Արտաւազդ / յիշեսջի(ք) յաղաւթս աղաչեմ.

յիշեցէք ի տր.»։ Երեք խաչերը բաւական գեղեցիկ են, համարում ենք ԺԴ. դարի գործ։ Կան և ուրիշ խաչարձաններ, որոնց լուսանկարը, տարաբաղդաբար, ձեռքի տակ չունինք։

Այս արձանագրութիւններից ա–ը. միայն ե–ի 2 և 4 համարներն ունի Լալայեան, Ազգ. Հանդ. XXIII. 132։

Բայց այստեղ յիշատակելի է յատկապէս մի անձն, որի անունը կապուած է վանքի հետ և ծագմամբ էլ Խաղբակեանց կամ Պոոշեանց տոհմին է պատկանում. դա Խաչատուր Կեչառեցին է։ Զլինէր մականունը, չէինք ունենալ որ և է առընչութեան հիմք այս վանքի հետ, որովհետև ոչ արձանագրութիւնները և ոչ էլ մինչև այժմ որ և է յայտնի յիշատակարան տեղեկութիւն է տալիս այդ մասին։ Արդեօ՞ք լոկ միարան էր, առաջնորդ, թէ Կեչառիսի գլխաւոր վարդապետը կամ

Պատկեր 132.

ը) Տաճարի եւ Ս. Նշանի մէջ եղած տարածութեան վերայ եղել են երկու փոքր խորաններ, որոնց մէջ կանգնել են չորս խաչքար. դոցանից հնագոյնը արուեստին նայելով՝ ձախ կողմի (նայողի) իրար վերայ դրած խաչերից ներքեւինն է (պատկ. 132), ոչ ուշ քան ԺԲ. դարը։ Սորա գլխինը ունի արձանագրութիւն առանց թուականի. «ԱՀ ողորմի Սարգ(ս)ի եւ իւր ծնողացն»։ Սրանց կողքինը պատուանդանի վերայ ունի արձանագրութիւն կիսով չափ մնացած. «Կանգնեալ պ/ . . . . / ժամանեա . . . մահու / . . . եղկելի ծնողի իւրո Եղիա. . . . ոց / . .

գիտական ներկայացուցիչը, հաւանականը վերջինն է։ Ստեփանոս Օրբէլեանի գլխաւորութեամբ գումարուած ժողովին 1295 թուին Կեչառեցին անմիջապէս ներկայ չէ եղել, որովհետև նորա ստորագրութիւնը չկայ ձեռնարկի տակ, որ բերուած է հեղինակի պատմութեան մէջ, բայց մի ձեռագրի մէջ ունինք և նորա ստորագրութիւնը. «Ես Խաչատուր վրդպ. Կեչառեցի վկայ եմ այսմ դաւանուես.»(*)։ Մեզ թւում է, թէ

(*) Ձեռ. Լ.Ջ.մ. № 94/3276. 58։ Մի տեսակ ժողովածու է մատենագրական տեղեկութիւնների, յիշատակարանների, հաւանօրէն եղել է դպրոցական ձեռնարկ։